



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

3 (71)

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2010 թվականի մարտի 25-ից

● Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՅՈՒՏԵՐ	4, 56
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 58</i>
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	10, 62
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>12, 64</i>
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	14, 66
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....</i>	<i>16, 68</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	17
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին</i>	<i>19</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	<i>47</i>
ՅՈՒՅԻՉՆԵՐ	49
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	51
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	69

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
Тел. (374 10) 561-126 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 56
Сведения о выданных патентах.....	6, 58
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	10, 62
Сведения о выданных патентах.....	12, 64
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	14, 66
Сведения о выданных патентах.....	16, 68
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	17
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	19
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	47
УКАЗАТЕЛИ.....	49
СООБЩЕНИЯ.....	51
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	69

CONTENTS

INVENTIONS.....	4, 56
Information on granted patents.....	6, 58
UTILITY MODELS.....	10, 62
Information on granted patents.....	12, 64
INDUSTRIAL DESIGNS.....	14, 66
Information on granted patents.....	16, 68
TRADE MARKS.....	17
Information on registered trade marks and service marks	19
Information on renewal of effect of trademark registration	47
INDEXES.....	49
REPORTS.....	51
TWO-LETTER CODES.....	69

93n1str

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

- 11** արտոնագրի համարը
- 13** փաստաթղթի տեսակի կոդը
A գյուտի արտոնագիր
B արտոնագրաունակության մասին եզրակացություն
- 21** հայտի համարը
- 22** հայտի ներկայացման թվականը
- 23** ցուցահանդեսային առաջնության թվականը
- 31** առաջին հայտի համարը
- 32** առաջին հայտի ներկայացման թվականը
- 33** երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
- 45** գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների
հրապարակման թվականը
- 51** միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54** գյուտի անվանումը
- 56** տեղեկատվության աղբյուրներ
- 57** գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
- 62** ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ներկայացման թվականը,
որից զատված է տվյալ հայտը
- 71** հայտատուն, երկրի կոդը
- 72** գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
- 73** արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
- 74** արտոնագրային հավատարմատար
- 85** միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
- 86** միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
- 87** միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2009) (11) 2352 (13) A
A61D 19/00

(21) AM20080148 (22) 21.08.2008
(45) 25.03.2010

(71) «Բժշկակենսաբանական միջազգային հետ-բուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ

(72) Նաիրա Սերյոժայի Բաղդասարյան (AM), Սիներիկ Ներսեսի Հայրապետյան (AM)

(73) «Բժշկակենսաբանական միջազգային հետ-բուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ, 0040, Երևան, Աճառյան 31 (AM)

(54) **Ցուլերի նախօրոք սառեցված սերմա-հեղուկի շարժունակության խթանման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ ընտանի կենդանիների մոտ արհեստական՝ in vitro պայմաններում բեղմնավորման արդյունավետության բարձրացման եղանակներին:

Նախօրոք սառեցված սերմահեղուկը ապաստանեցնում են 1մլ 2.9%-անոց կիտրոնաթթվական նատրիումի լուծույթի չեզոք միջավայրում՝ 35°C ջերմաստիճանում և ստացված համասեռ խառնուրդի վրա ազդում են ինֆրաձայնային ալիքով՝ 2 Հց հաճախությամբ և 30 դբ ինտենսիվությամբ 5 րոպե տևողությամբ:

Բարձրացվում է սերմահեղուկի շարժունակությունը ապաստանեցումից հետո:

որը կոմպլեքսավորված է Ca²⁺ իոնների հետ CaPi-Պոլի I:C ձևով հետևյալ հարաբերակցությամբ. Պոլի I:C՝ 93-95 և Ca²⁺՝ 5-7:

Ապահովվում է ինտերֆերոնի տևական սինթեզ օրգանիզմում:

(51) (2009) (11) 2354 (13) A
B25J 11/00

(21) AM20090139 (22) 20.11.2009
(45) 25.03.2010

(71) Յուրի Լևոնի Սարգսյան (AM), Արմեն Գերասիմի Խառատյան (AM)

(72) Յուրի Լևոնի Սարգսյան (AM), Արմեն Գերասիմի Խառատյան (AM)

(73) Յուրի Լևոնի Սարգսյան, 0033, Երևան, Ա.Ավետիսյան, 70, բն. 99 (AM), Արմեն Գերասիմի Խառատյան, 2002, Վանաձոր, Բանակի փող. կրթ., 4 (AM)

(54) **Մանիպուլյացիոն սարք**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը:

Սարքն իրենից ներկայացնում է տարածական մեխանիզմ, որն ունի կանգնակ, տանող և տարվող օղակներ, շարժաթև և երկու բռնիչ, որոնցից մեկը տեղակայված է տանող օղակի վրա, իսկ մյուսը՝ տարվող օղակի վրա: Տանող օղակը շարժաթևին միացված է պտտման զույգի միջոցով, իսկ կանգնակին՝ գլանական զույգի միջոցով: Տարվող օղակը շարժաթևին ու կանգնակին միացված է գլանական զույգերի միջոցով:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 1 նկ.:

(51) (2009) (11) 2353 (13) A
A61K 31/00
A61K 38/00

(21) AM20080147 (22) 21.08.2008
(45) 25.03.2010

(71) «Բժշկակենսաբանական միջազգային հետ-բուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ

(72) Արթուր Ստեփանի Աղաբալյան (AM), Կոնստանտին Գրիգորի Կարազյոզյան (AM), Սիներիկ Ներսեսի Հայրապետյան (AM), Ռոբերտ Արամա-յիսի Չախարյան (AM)

(73) «Բժշկակենսաբանական միջազգային հետ-բուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ, 0040, Երևան, Աճառյան 31 (AM)

(54) **Ինտերֆերոնի տևական սինթեզ առաջաց-նող ձևափոխված ՌՆԹ Պոլի I:C**

(57) Ինտերֆերոնի տևական սինթեզ առաջացնող ձևափոխված ՌՆԹ Պոլի I:C ներառում է Պոլի I:C,

(51) (2009) (11) 2355 (13) A
B60Q 9/00
B60R 16/02

(21) AM20090109 (22) 04.09.2009
(45) 25.03.2010

(31) 2008136952/11 (32) 16.09.2008 (33) RU

(71) Նինա Ալեքսանդրի Վախնինա (RU), Սերգեյ Սերգեյի Ուվարով (RU)

(72) Նինա Ալեքսանդրի Վախնինա (RU), Սերգեյ Սերգեյի Ուվարով (RU)

(73) Նինա Ալեքսանդրի Վախնինա (RU), Սերգեյ Սերգեյի Ուվարով (RU)

(54)Ուժեղացման-ընդունման-կոմուտացման սարք և կապի ու բարձրախոսային ազդարարման համակարգ էլեկտրագնացքի համար

(57) Գյուտը վերաբերում է ուժեղացման-ընդունման-կոմուտացման սարքերին և շարժիչային վազոններով շարժակազմում «խցիկ-խցիկ», «վազոն-խցիկ», «խցիկ-վազոն» ուղղություններով կիսաերկկողմանի ձայնային կապի ֆունկցիա կատարող տեղային էլեկտրահաղորդալարային կապի ու բարձրախոսային ազդարարման համակարգերին:

Ուժեղացման-ընդունման-կոմուտացման սարքն ունի հաստատուն լարումների իմպուլսային կերպափոխիչ, որի մուտքը միացված է հաստատուն հոսանքի աղբյուրին, պաշտպանական անջատման սարք, հզորության ուժեղարար, ռեգիստոր, բարձր հաճախականության գտիչ, մեքենավարի խցիկի բարձրախոսին միացված լարման ուժեղարար, երեք կառավարելի բանալի, մանիպուլյատոր, խառնիչ, ԿԱՄ, ԵՎ, ՈՉ տարրեր:

Էլեկտրագնացքի համար կապի ու բարձրախոսային ազդարարման համակարգն ունի էլեկտրագնացքի կազմի հակառակ ծայրերում տեղակայված ուժեղացման-ընդունման-կոմուտացման սարքեր, որոնք կապված են միմյանց հետ բարձրախոսներ ունեցող ազդարարման գծով և ուղևորի ներքին հաղորդակցման սարքերով կապի գծով:

Ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, բարձրանում է «խցիկ-խցիկ», «վազոն-խցիկ», «խցիկ-վազոն» ուղղություններով տեղեկատվության փոխանակման շարժունակությունը և արագագործությունը, ինչպես նաև ապահովվում է ազդարարման համակարգին բառային տեղեկատվության այլ աղբյուրների միացման հնարավորությունը, 2 անկախ կետ, 4 նկ.:

(74) Ա. Պետրոսյան

(51) (2009) (11) 2356 (13) A
B65D 23/00

(21) AM20090133 (22) 11.11.2009
(45) 25.03.2010

(71) Անուշավան Եղիշեի Միրզոյան (AM)

(72) Անուշավան Եղիշեի Միրզոյան (AM)

(73) Անուշավան Միրզոյան, 0012, Երևան, Կոմիտասի 36բ, բն.2 (AM)

(54) **Ըմպելիքի համար 22ի բկանցք**

(57) Գյուտը վերաբերում է ըմպելիքների համար նախատեսված շշերին:

Ըմպելիքի համար 22ի բկանցքը փակվում է երկու մասից կազմված պարուրակավոր կափարիչով: Միացնող կապի խզման դեպքում մասերից մեկն առանձնանում է, իսկ մյուսը մնում է 22ի վզիկին: Կափարիչի առանձնացվող մասն ունի պարուրակավոր և բաժակածև հատվածներ: Շշի բկանցքին միակցված է կարճախողովակ: Կարճախողովակի և 22ի բկանցքի միակցման մասում կա միջանցիկ անցքերով օղակածև փորվածք և կոնածև հաստացում: Կափարիչի առանձնացվող մասի ներսում պարուրակավոր և բաժակածև հատվածների միակցման սահմանում կա փորվածքի չափերին ու ձևին համապատասխանող ելուստ, իսկ կափարիչի վերին մասում՝ կարճախողովակի եզրը կիպ ընդգրկող ելուստ:

Պարզեցվում է կառուցվածքը, նվազեցվում է ինքնարժեքը, 3 նկ.:

(51) (2009) (11) 2357 (13) A
C02F 1/50

(21) AM20080155 (22) 08.09.2008
(45) 25.03.2010

(71) «Բժշկակենսաբանական միջազգային հետ-բուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ

(72) Սիներիկ Ներսեսի Հայրապետյան (AM), Սեյեդ Էհոլլահ Մոսսավի (IR), Վարսիկ Սամվելի Մարտիրոսյան (AM)

(73) «Բժշկակենսաբանական միջազգային հետ-բուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ, 0040, Երևան, Աճառյան 31 (AM)

(54) **Մանրէներից ջրի մաքրման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է ջրի մաքրման եղանակներին, մասնավորապես՝ մանրէներից մաքրմանը:

Ջրի մեջ ներմուծում են ածխածնի երկօքսիդ և ջրածնի պերօքսիդ, ընդ որում միջավայրի pH-ի 6 արժեքում և ջերմաստիճանի 15-20° C պայմաններում:

Բարձրացվում է ջրի մաքրման արդյունավետությունը:

(51) (2009) (11) 2358 (13) A
F24J 2/06

(21) AM20090130 (22) 04.11.2009
(45) 25.03.2010

(71) Ռուբեն Ռաֆայելի Վարդանյան (AM)

(72) Ռուբեն Ռաֆայելի Վարդանյան (AM)

(73) Ռուբեն Ռաֆայելի Վարդանյան, 0025, Երևան, Մյասնիկյան պող.7, բն.1ա (AM)

(54) Արեգակնային Էներգիայի կոնցենտրատորային կերպափոխիչ (տարբերակներ)

(57) Գյուտը վերաբերում է արեգակնային էներգիայի կոնցենտրատորային կերպափոխիչներին և կարող է օգտագործվել արեգակի էներգիան էլեկտրականի և(կամ) ջերմայինի կերպափոխման համար:

Կերպափոխիչն ունի հարթ մակերևույթի վրա կենտրոնական առանցքի նկատմամբ սիմետրիկ աջ և ձախ կողմերից ամրակցված կիզակետող, տարբեր անկյունների տակ թեքված հարթ հայելիներ: Երկու կողմերի եզրային հայելիներն ամրակցված են այնպես, որ կազմեն պարաբոլային մակերևույթներ: Հայելիների կիզակետում կենտրոնական առանցքի նկատմամբ սիմետրիկ աջ և ձախ կողմերում կանգնակների օգնությամբ ջերմացրի երկայնքով ամրակցված են ֆոտոէլեկտրական կիսահաղորդչային կերպափոխիչներ:

Աջ և ձախ կողմերի հայելիների կենտրոնի դեպքում աջակողմյան և ձախակողմյան կերպափոխիչների մակերևույթները համապատասխանաբար ուղղահայաց են աջակողմյան և ձախակողմյան կենտրոնական հայելիներից անդրադարձող արեգակնային ճառագայթներին:

Աջ և ձախ կողմերի հայելիների զույգ թվի դեպքում աջակողմյան և ձախակողմյան կերպափոխիչների մակերևույթները համապատասխանաբար ուղղահայաց են աջակողմյան և ձախակողմյան կենտրոնական երկու հայելիներից անդրադարձող ճառագայթներով կազմված անկյան կիսորդին:

Բարձրացվում է կերպափոխիչի աշխատանքի արդյունավետությունը, նվազում է ինքնարժեքը, 2 անկախ կետ, 2 նկ.:

(51) (2009) (11) 2359 (13) A
G01C 21/28

(21) AM20080146 (22) 19.08.2008
(45) 25.03.2010

- (71) Ռոբերտ Չալիբեկի Ջիջյան (IS)
- (72) Ռոբերտ Չալիբեկի Ջիջյան (IS), Անահիտ Ռոբերտի Ջիջյան (AM), Գայանե Ռոբերտի Ջիջյան (AM)
- (73) Ռոբերտ Չալիբեկի Ջիջյան, 52401, Իսրայել, Ռամատ Գան, Հարոն 121, բն.3 (IS)

(54) Ճանապարհահատվածում երթևեկության պատկերը կառուցող սարք

(57) Գյուտը վերաբերում է երթևեկության անվտանգությունն ապահովող ավտոմատ սարքերին:

Սարքն ունի տեղադիրքի որոշման գլոբալ նավիգատորային համակարգ (GPS նավիգատոր), տվյալ շարժվող օբյեկտի շարժման ընթացիկ տվյալների ռադիոհաղորդիչ, շրջապատում շարժվող օբյեկտների ռադիոազդանշանների ընդունիչ բլոկ, ընդունիչ և հաղորդիչ ալեհավաքներ: GPS նավիգատորի միկրոպրոցեսորի ելքը միացված է տվյալ շարժվող օբյեկտի շարժման ընթացիկ տվյալների ռադիոհաղորդիչի մուտքին, որի ելքը միացված է հաղորդիչ ալեհավաքին, ընդունիչ ալեհավաքի ելքը միացված է ռադիոազդանշանների ընդունիչ բլոկի մուտքին, որի ելքը միացված է GPS նավիգատորի միկրոպրոցեսորի մուտքին: Միկրոպրոցեսորի հիշողությունը ներառում է տվյալ օբյեկտի շարժման ընթացիկ տվյալները հարևան շարժվող օբյեկտների սարքերին հաղորդող, դրանց շարժման ընթացիկ տվյալները ընդունող և այդ տվյալների միջոցով ճանապարհահատվածում օբյեկտների երթևեկության պատկերը կառուցող ծրագրեր:

Բարձրացվում է երթևեկության անվտանգությունը, 1 նկ.:

(51) (2009) (11) 2360 (13) A
G01N 3/08

(21) AM20090134 (22) 13.11.2009
(45) 25.03.2010

- (71) Սամվել Լիպարիտի Սահակյան (AM)
- (72) Սամվել Լիպարիտի Սահակյան (AM)
- (73) Սամվել Լիպարիտի Սահակյան, 0010, Երևան, Հյուսիսային պող. 10, բն. 12 (AM)

(54) Հացահատիկային մշակաբույսերի հատիկի ամրության և դեֆորմացիայի որոշման սարք

(57) Գյուտը վերաբերում է պինդ նյութերի ամրությունը հետազոտող սարքերին:

Սարքը հիդրավլիկական մամլիչ է, ունի հատիկի վրա ճնշում գործադրող մեխանիզմ և ճնշման մեծությունը չափագրանցող մեխանիզմ: Առաջին մեխանիզմն ունի ուղղաձիգ անշարժ ձող և դրան համառանցք տեղադրված սևամեջ միսոց, որի խոռոչը հաղորդակցվում է հիդրավլիկական

համակարգի հետ: Երկրորդ մեխանիզմն ունի ճնշման ուժը չափող մանոմետր և դեֆորմացիայի մեծությունը չափող ցուցասարք, որը միացված է անշարժ ձողին:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը և հետազոտման գործընթացը, 1 նկ.:

(51) (2009) (11) 2361 (13) A
H01H 37/00

(21) AM20080056 (22) 05.05.2008
(45) 01.10.2008

(71) Նորայր Չավենի Գրիգորյան (AM), Գոհար Արամի Մինասյան (AM)

(72) Նորայր Չավենի Գրիգորյան (AM), Գոհար Արամի Մինասյան (AM)

(73) Նորայր Չավենի Գրիգորյան, 0034, Երևան, Օգանովի 46/1, բն. 17 (AM), Գոհար Արամի Մինասյան, 0020, Երևան, Վարդաշենի 5-րդ փող. 1/1 (AM)

(54) **Ինդուկտիվ ջերմային տվիչ**

(57) Տվիչն ունի իրանի մեջ տեղակայված ֆեռոմագնիսական միջուկ և ինդուկտիվության կոճ, ջերմազգայուն տարր: Ֆեռոմագնիսական միջուկը Ս-աձև է, դրա աշխատանքային ծայրերն ունեն դեպի միջուկի կենտրոն ու վեր ուղղված ելուստներ: Դեպի կենտրոն ուղղված ելուստներից մեկի եզրին ամրակցված է դիէլեկտրիկ բարակ թիթեղ: Ջերմազգայուն տարրը տեղակայված է իրանից դուրս և պարփակված է միջուկի աշխատանքային ծայրերի ելուստներով: Աշխատանքային ճեղքի լայնության և ջերմազգայուն տարրի երկարության հարաբերությունն ընտրված է համապատասխան միջակայքից:

Ապահովվում են տվիչի կառուցվածքի պարզեցումը, օգտագործման հարմարավետության բարձրացումը, չափման ճշգրտության եւ ջերմաստիճանային տիրույթի մեծացումը, 2 նկ.:

(51) (2009) (11) 2362 (13) A
H01H 37/00

(21) AM20080054 (22) 05.05.2008
(45) 01.10.2008

(71) Նորայր Չավենի Գրիգորյան (AM), Գոհար Արամի Մինասյան (AM)

(72) Նորայր Չավենի Գրիգորյան (AM), Գոհար Արամի Մինասյան (AM)

(73) Նորայր Չավենի Գրիգորյան, 0034, Երևան, Օգանովի 46/1, բն. 17 (AM), Գոհար Արամի Մինասյան, 0020, Երևան, Վարդաշենի 5-րդ փող. 1/1 (AM)

(54) **Փոքրածավալ ինդուկտիվ տվիչի ջերմազգայուն տարրի ընտրության եղանակ**

(57) Ըստ եղանակի ջերմաստիճանային տրված փոքրագույն քայլի համար որոշում են ջերմազգայուն տարրի ինտեգրալ արատների երկրաչափական չափերի գումարային արժեքը և դրա վերին սահմանային արժեքը: Չափում են ջերմազգայուն տարրի լայնական չափը, որոշում են ջերմային ընդարձակման չափը և ընտրում այն տարրը, որը բավարարում է համապատասխան պայմաններին:

Ապահովվում է տվիչների արտադրական բազայի ընդլայնումը:

(51) (2009) (11) 2363 (13) A
H01H 37/00

(21) AM20080053 (22) 05.05.2008
(45) 01.12.2008

(71) Նորայր Չավենի Գրիգորյան (AM), Գոհար Արամի Մինասյան (AM)

(72) Նորայր Չավենի Գրիգորյան (AM), Գոհար Արամի Մինասյան (AM)

(73) Նորայր Չավենի Գրիգորյան, 0034, Երևան, Օգանովի 46/1, բն. 17 (AM), Գոհար Արամի Մինասյան, 0020, Երևան, Վարդաշենի 5-րդ փող. 1/1 (AM)

(54) **Ինդուկտիվ ջերմային տվիչի ջերմազգայուն տարրի ընտրության եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է չափողական տեխնիկային:

Ըստ եղանակի չափում են ջերմազգայուն տարրի երկարությունը, իսկ լայնությունը և բարձրությունը ընտրում են այնպես, որ տվյալ ջերմազգայուն տարրում արատի առկայության հավանականությունը չգերազանցի անհրաժեշտ տվյալ խնդրի համար պահանջվող արժեքից:

Պարզեցվում է ջերմային տվիչի ջերմազգայուն տարրի ընտրման գործընթացը, 1 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական
տվյալների նույնականացման միջազգային
կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	<i>արտոնագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը U օգտակար մոդելի արտոնագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ներկայացման թվականը</i>
23	<i>ցուցահանդեսային առաջնության թվականը</i>
31	<i>առաջին հայտի համարը</i>
32	<i>առաջին հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը</i>
45	<i>օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը</i>
51	<i>միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)</i>
54	<i>օգտակար մոդելի անվանումը</i>
56	<i>տեղեկատվության աղբյուրներ</i>
57	<i>օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը</i>
62	<i>ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը</i>
71	<i>հայտատուն, երկրի կոդը</i>
72	<i>օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը</i>
73	<i>արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>
85	<i>միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը</i>
86	<i>միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը</i>
87	<i>միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը</i>

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **(2009)** (11) **188** (13) **U**
B24B 9/00
 (21) **AM20090137U** (22) **18.11.2009**
 (45) 25.03.2010
 (71) Ալեքսան Արզումանյան (AM)
 (72) Ալեքսան Արզումանյան (AM), Յարուբյուր Պոչոյան (AM), Արմեն Մելքոնյան (AM)
 (73) Ալեքսան Արզումանյան, 3102.Գյումրի, Գոգունցի 6, բն. 4ա (AM)
(54) Բարդ եզրածեղի դետալների նախապատրաստվածքների մշակման հաստոց
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է ոսկերչական իրերի արտադրությանը, մասնավորապես՝ կաթոշոն ձևի ներդիրների նախապատրաստվածքների ստացման համար նախատեսված հաստոցներին:
 Բարդ եզրածեղի դետալների նախապատրաստվածքների մշակման հաստոցն ունի իրան, որի մեջ տեղակայված է հղկասկավառակ: Հղկասկավառակն ամրացված է շարժաբեր ուղղաձիգ լիսեռի հետ կապված իլի վրա: Իրանի ներքին մակերևույթը պատված է հղկանյութով: Իլը կապված է իրանին ներքին կառչման շփագույգի միջոցով, իսկ շարժաբեր լիսեռի հետ գնդաձև հողակապով՝ ուղղաձիգ առանցքի նկատմամբ թեքման անկյուն ապահովելու համար:
 Բարձրացվում է մշակման ինտենսիվությունը, 2 նկ.:

(51) **(2009)** (11) **189** (13) **U**
F26B 3/00
 (21) **AM20090121U** (22) **13.10.2009**
 (45) 25.03.2010
 (71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
 (72) Արմեն Արտաշեսի Մաթևոսյան (AM), Յովիկ Յամայակի Գիշյան (AM), Աիդա Գրիգորի Բարոյան (AM)
 (73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Չորացման տեղակայանք
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է գյուղատնտեսությանը և կարող է օգտագործվել բարձր խոնավությամբ նյութերի՝ մրգերի, բանջարեղենի, սնկերի, հատապտուղների չորացման համար:
 Տեղակայանքն ունի չորացման խուց, որի պատերի ներքին մակերևույթները պատրաստված են հայելային մակերևույթ ունեցող նյութից: Չորացման խցի կողային պատերն ունեն որոշակի թեքություն և դրանց հայելային մակերևույթն ալեձև է:
 Չորացման խցում տեղակայված են չորացվող նյութի տակդիրներ, որոնց տակ ամրացված է ջերմաստիճանի տվիչը, որը միացված է ավտոմատ կարգավորման բլոկին: Ավտոմատ կարգավորման բլոկին միացված են նաև տաքացման կրիտիկական ջերմաստիճանի առաջադիրիչը և օդափոխիչները: Տեղակայանքի վերին մասում ամրացված են երկշերտ ապակիներ, որոնք կատարում են կոնցենտրատորային կոլեկտորի դեր:
 Պարզեցվում է սարքի կառուցվածքը, փոքրացվում է էներգատարողությունը, պահպանվում են չորացվող մթերքների որակը և ապրանքային տեսքը, 1 նկ.:

(51) **(2009)** (11) **190** (13) **U**
G01L 1/16
 (21) **AM20090148U** (22) **01.12.2009**
 (45) 25.03.2010
 (71) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)
 (72) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM), Ստյոպա Կարապետյան (AM), Սերյոժա Յմայակի Յակոբյան (AM), Յովհաննես Սամվելի Մանուկյան (AM)
 (73) Ալեքսան Արզումանյան, 3102.Գյումրի, Գոգունցի 6, բն. 4ա (AM)
(54) Դինամոմետր
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է մետաղների մշակման բնագավառին և կարող է կիրառվել նյութերի սայրային գործիքներով նուրբ մշակման բնագավառում դինամիկ բեռնվածքների, ինչպես նաև կտրման ուժերի ճշգրիտ չափման համար:

Դիսամոմետրն ունի իրանի վրա տեղադրված երկու էլեկտրահաղորդիչ սալիկների միջև ամրակցված այեզոթադանթ, որն ունի ազդանշանային կաբելներ: Պյեզոթադանթը տարածված է երկու էլեկտրահաղորդիչ սալիկների միջև՝ ամբողջ մակերևույթով: Մշակվող նախապատրաստվածքը սալիկների վրա սևեռող Դ-աձև բռնիչը ամրակցված է իրանին և ունի սևեռող պտուտակներ:

Պյեզոթադանթի հետ կապված ազդանշանային կաբելները տեղադրված են սալիկների վրա փորված անցքերում:

Բարձրացվում է չափումների ճշգրտությունը, 4 նկ. :

(51) (2009) (11) 191 (13) U
H03J 9/00
H04N 5/60

(21) AM20090142U (22) 25.11.2009
(42) 25.03.2010
(71) Մարտին Շիրինյան (AM)
(72) Մարտին Շիրինյան (AM), Յարուբյուն Շիրինյան (AM), Յայկ Շիրինյան (AM)
(73) Մարտին Շիրինյան, 0025, Երևան, Չարենցի 64, բն.4 (AM)
(54) **Յեռուստահաղորդումների մեկուսացված ունկնդրման համակարգ**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է հեռուստատեսությանը, մասնավորապես՝ հեռուստացույցների ձայնային համակարգերին:

Յեռուստահաղորդումների մեկուսացված ունկնդրման համակարգը կազմված է հեռուստացույցից՝ իր ֆունկցիոնալ հանգույցներով և հեռուստացույցի հեռակառավարման վահանակից: Յեռուստացույցի իրանում տեղակայված է նրա սնման աղբյուրին միացված գերկարճալիք ռադիոհաղորդիչ իր հաղորդիչ անտենայով: Յեռուստացույցի հեռակառավարման վահանակի իրանում տեղակայված են ֆունկցիոնալ սեղմակները, կառավարող ազդանշանների հաղորդիչը, ցածր հզորության բարձրախոսը, սնման աղբյուրը, դրան միացված գերկարճալիք ռադիոընդունիչը և իր ընդունիչ անտենան: Յեռուստացույցի

գերկարճալիք ռադիոհաղորդիչ և վահանակի գերկարճալիք ռադիոընդունիչի աշխատանքային հաճախությունները նույնն են, իսկ գերկարճալիք ռադիոհաղորդիչի հաճախությունը մոդուլացվում է հեռուստացույցի ձայնային ելքի բնիկից դուրս եկող ձայնային ազդանշանի միջոցով:

Պարզեցվում է համակարգի կառուցվածքը, ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 1 նկ.:

(51) (2009) (11) 192 (13) U
H04W 8/00

(21) AM20090117U (22) 25.09.2009
(45) 25.03.2010
(71) Մարտին Շիրինյան (AM)
(72) Մարտին Շիրինյան (AM), Յարուբյուն Շիրինյան (AM)
(73) Մարտին Շիրինյան, 0025, Երևան, Չարենցի 64, բն.4 (AM)
(54) **Բջջային հեռախոսների միջոցով պարզևատրվող գովազդների տարածման եղանակ**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է հեռահաղորդակցմանը, մասնավորապես՝ բջջային հեռախոսներով պարզևատրվող գովազդների տարածմանը:

Առաջարկվում է շարժական հեռահաղորդակցման և 3G, 4G կապի կամ շրջահոսային Streaming համակարգի, ինչպես նաև WAP ինտերնետային ծառայության միջոցով պարզևատրվող գովազդների տարածման եղանակ, որը հաշվի է առնում բջջային բաժանորդների սեռատարիքային պատկանելիությունը, կրթությունը, մասնագիտությունը, զբաղմունքի տեսակը, նախասիրությունները, հետաքրքրությունները, և գովազդը դիտելուց հետո նրանց ուղարկած հարցաշարերի պատասխանները: Յարգաշարերի հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում որպես պարզևատրում բաժանորդի հեռախոսը վերալիցքավորում են որոշակի հաստատագրված գումարով:

Բարձրացվում է գովազդների տարածման արդյունավետությունը, 1 նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ

**Արդյունաբերական սմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՄՅՏ ST.80 ստանդարտի**

11	վկայագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական սմուշի վկայագիր
21	հայտի համարը
22	հայտի ստացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
24	գրանցման թվականը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
51	արդյունաբերական սմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)
54	արդյունաբերական սմուշի անվանումը
55	արդյունաբերական սմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
71	հայտատուն(ները), երկրի կոդը
72	հեղինակը(ները), երկրի կոդը
73	իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

- (51) 09-01 (11) 225 (13) S
 (21) 20090027 (22) 25.08.2009
 (71) Առևտրի Տուն «Ալտերնատիվա - ԱՆԱ»
 ՍՊԸ (RU)
 (72) Ա. Պրոգունենչիկով (RU)
 (73) Առևտրի Տուն «Ալտերնատիվա - ԱՆԱ»
 ՍՊԸ (RU)
 (74) Յ. Դավթյան
 (54) Շիշ
 (55)



Պատկեր 1



Պատկեր 2



Պատկեր 3



Պատկեր 4

- (51) 09-03 (11) 226 (13) S
 (21) 20090025 (22) 15.08.2009
 (71) «Թալգրիգ» ՍՊԸ (AM)
 (72) Թ. Գրիգորյան (AM)
 (73) «Թալգրիգ» ՍՊԸ (AM)
 (74) Ռ. Մանասերյան
 (54) **Լավաշի փաթեթվածք**
 (55)



ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային եւ սպասարկման նշաններին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

600	նախկին ԽՍՀՄ վկայականի համարը եւ հայտի ներկայացման թվականը
111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
510	ապրանքների եւ (կամ) ծառայությունների ցանկը
511	դասերը ըստ նշանների գրանցման ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգման (Նիցայի դասակարգում)
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ նշան
554	ծավալային նշան
591	գույնը եւ գույնային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը եւ թվականը
730	նշանի սեփականատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

**Տեղեկություններ գրանցված ապրանքային
եւ սպասարկման նշանների մասին**

(210) **20090638** (111) **14923**
 (220) **09.06.2009** (151) **21.01.2010**
 (181) **09.06.2019**
 (730) «Մասիսի թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ,
 Արարատի մարզ, գյուղ Նորամարգ, AM
 (540)



(591) Նշանը պահպանվում է կարմիր, բաց և մուգ
 դեղին, սև և սպիտակ գունային համակ-
 ցությամբ:
 (511) (510)
 դաս 29. թռչնամիս, հավ, ձու.
 դաս 31. ընտանի թռչուն (կենդանի).
 դաս 44. տոհմային թռչնաբուծություն:

(210) **20090718** (111) **14924**
 (220) **25.06.2009** (151) **21.01.2010**
 (181) **25.06.2019**
 (730) «Զի էյջ սթորիջ Էնթերփրայզս» ՍՊԸ, Երևան,
 Արարատյան 90/8, AM
 (540)



(591) Նշանը պահպանվում է կարմիր, դեղին, սև և
 սպիտակ գունային համակցությամբ:
 (511) (510)
 դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ,
 տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. այլուր
 և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն
 և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ.
 խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ.
 քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք.
 սառույց.
 դաս 31. գյուղատնտեսական, այգեգործական,
 անտառային և հացահատիկային մթերքներ, որոնք
 ընդգրկված չեն այլ դասերում. կենդանիներ. թարմ
 մրգեր և բանջարեղեն. սերմեր, բնական բույսեր և
 ծաղիկներ. կեր կենդանիների համար. ածիկ:

(210) **20090768** (111) **14925**
 (220) **08.07.2009** (151) **21.01.2010**
 (181) **08.07.2019**
 (730) «Վեդու գինու գործարան» ԲԲԸ, ՀՀ Արարատի
 մարզ, Վեդու գ/գ Բանավան, AM
 (540)

**ԱՐԴԱԳ
 АРДАГ
 ARDAG**

(511) (510)
 դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ
 գարեջրի):

(210) **20090823** (111) **14926**
 (220) **16.07.2009** (151) **21.01.2010**
 (181) **16.07.2019**
 (730) «Մնալ» ՍՊԸ, Երևան, Վրացական 21/2, քմ.
 12, AM

(540)



(526) “REALTY AGENCY” արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է դեղին, կապույտ, կարմիր գույնային համակցությամբ:

(511) (510)
դաս 36. անշարժ գույքի գործակալություն:

(210) **20090913** (111) **14927**
(220) **28.07.2009** (151) **21.01.2010**
(181) **28.07.2019**

(730) «Վեդու գինու գործարան» ԲԲԸ, ՀՀ Արարատի մարզ, Վեդու գ/գ Բանավան, AM

(540)

ԱՐԱՐՈ
ARABO
АРАБО

(511) (510)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):

(210) **20090927** (111) **14928**
(220) **03.08.2009** (151) **21.01.2010**
(181) **03.08.2019**

(730) «Վեդու գինու գործարան» ԲԲԸ, ՀՀ Արարատի մարզ, Վեդու գ/գ Բանավան, AM

(540)

ՄԱԽԼՈՒՏՈ
MAKHLUTO
МАХЛУТО

(511) (510)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):

(210) **20090930** (111) **14929**
(220) **03.08.2009** (151) **21.01.2010**
(181) **03.08.2019**

(730) Սահակյան Ջուլիետտա, Երևան, Բաղրամյան 62, ք. 40, AM

(540)

ԴԵՍՊԵՐԱԴՈ ՋԻՆՍ
DESPERADO JEANS

(511) (510)
դաս 25. հագուստ, կոշիկներ, գլխարկներ.
դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ:

(210) **20090956** (111) **14930**
(220) **07.08.2009** (151) **21.01.2010**
(181) **07.08.2019**

(730) «Երևանի գարեջուր» ՓԲԸ, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 8, AM

(540)



(526) Նշանը պահպանվում է սև, ոսկեգույն, դեղին, սպիտակ և կանաչ գույնային համակցությամբ:

(591) Բացի “ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ ՓԲԸ, “ արտահայտությունից մնացած բոլոր գրանույններն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(511) (510)
դաս 32. գարեջուր:

(210) **20091143** (111) **14931**
 (220) **24.09.2009** (151) **21.01.2010**
 (181) **24.09.2019**
 (730) «Մապ» ՓԲԸ, Արմավիրի մարզ, գյուղ
 Լենուղի, AM
 (540)

**ԲԻԲԼԻԱԿԱՆ ՄԱՐ
 БИБЛЕЙСКАЯ ГОРА
 BIBLE MOUNT**

(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, սպի-
 տակ և շագանակագույն գունային համակ-
 ցությամբ:
 (511) (510)
 դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ
 գարեջրի):

(210) **20091246** (111) **14932**
 (220) **14.10.2009** (151) **21.01.2010**
 (181) **14.10.2019**
 (730) «Հայաստան առևտրի կենտրոն Հայրապետյան
 եղբայրներ» ՓԲԸ, Երևան, Զր. Քոչարի 2ա, AM
 (540)

**«ՓԱՅԼԱԿ»
 ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ**

(526) «ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ» բառն ինքնուրույն պահ-
 պանության օբյեկտ չէ:
 (511) (510)
 դաս 41. նախակրթարան:

(210) **20091274** (111) **14933**
 (220) **20.10.2009** (151) **21.01.2010**
 (181) **20.10.2019**
 (730) Արարատի մարզի կոնյակի գործարան
 «Ա.Կ.Զ.» ՍՊԸ, Արարատ, Պուշկինի 12, AM
 (540)



**ՍՈԼՆԵՉՆԱՅԱ ԱՐՄԵՆԻԱ
 СОЛНЕЧНАЯ АРМЕНИЯ
 SOLNECHNAYA ARMENIA**

(511) (510)
 դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ
 գարեջրի):

(210) **20091625** (111) **14934**
 (220) **17.12.2009** (151) **21.01.2010**
 (181) **17.12.2019**
 (730) Մանուկյան Աննա, Երևան, Բաղրամյան 2-
 րդ փկղ., 9-րդ շենք, բն. 35, AM
 (540)



(511) (510)
 դաս 25. հագուստ.
 դաս 35. առևտուր.
 դաս 42. դիզայն, մոդելավորում:

(210) **20081371** (111) **14935**
 (220) **19.12.2008** (151) **29.01.2010**
 (181) **19.12.2018**
 (730) «Պոդիում սթայլ» ՍՊԸ, Երևան, Մոսկովյան
 31, AM
 (540)

PODIUM

(511) (510)
 դաս 35. գովազդ. գործերի կառավարում
 գործարարության ասպարեզում. վարչարարական
 գործունեություն գործարարության ասպարեզում.
 գրասենյակային ծառայություններ:

(210) **20090071** (111) **14936**
 (220) **30.01.2009** (151) **29.01.2010**
 (181) **30.01.2019**
 (730) Մերի Քեյ Ինք., Դելավերի նահանգ, US
 (540)

PRONEWAL

(511) (510)

դաս 3. կոսմետիկական միջոցներ. օծանելիք, օդեկոլոններ, անուշաբույր ջուր և անուշաբույր արտադրանք անձնական օգտագործման համար. մաշկի ինսամֆի դեղերով չտոգորված միջոցներ. դեղերով չտոգորված արդուզարդի պարագաներ անձնական օգտագործման համար. մարմնի օճառներ և մաքրող միջոցներ. արևայրուքի համար նախատեսված միջոցներ. եթերային յուղեր անձնական օգտագործման համար. մազերի ինսամֆի միջոցներ:

(740) Ալ. Նահապետյան

(210) **20090100**

(111) **14937**

(220) **10.02.2009**

(151) **29.01.2010**

(181) **10.02.2019**

(730) Լոնդա ԳմբՅ, DE

(540)

LONDA COLOR FOR STUBBORN GREYS

(511) (510)

դաս 3. օճառներ, օծանելիք, եթերային յուղեր, մարմնի և դեմքի ինսամֆի համար նախատեսված կոսմետիկական պատրաստուկներ, մազերի լոսյոններ, ատամի փոշիներ և մածուկներ:

(740) Ալ. Նահապետյան

(210) **20090433**

(111) **14938**

(220) **10.04.2009**

(151) **29.01.2010**

(181) **10.04.2019**

(730) Ստադա Արցնայմիտել ԱԳ, DE

(540)

ГИДРОВИТ

(511) (510)

դաս 5. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար. սննդային հավելումներ բուժական նպատակների համար. պատիճներ բուժական նպատակների համար. դեղամիջոցներ. դեղամիջոցներ մարդկանց համար. դեղահատեր դեղագործական նպատակների համար. կենսաբանական պատրաստուկներ բուժական նպատակների համար. վիտամինային պատրաստուկներ. մանրատարրերով պատրաստուկներ մարդկանց և կենդանիների համար. դեղագործական պատրաստուկներ:

(740) Ա. Գալոյան

(210) **20090434**

(111) **14939**

(220) **10.04.2009**

(151) **29.01.2010**

(181) **10.04.2019**

(730) Ստադա Արցնայմիտել ԱԳ, DE

(540)

HYDROVIT

(511) (510)

դաս 5. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար. սննդային հավելումներ բուժական նպատակների համար. պատիճներ բուժական նպատակների համար. դեղամիջոցներ. դեղամիջոցներ մարդկանց համար. դեղահատեր դեղագործական նպատակների համար. կենսաբանական պատրաստուկներ բուժական նպատակների համար. վիտամինային պատրաստուկներ. մանրատարրերով պատրաստուկներ մարդկանց և կենդանիների համար. դեղագործական պատրաստուկներ:

(740) Ա. Գալոյան

(210) **20090479**

(111) **14940**

(220) **22.04.2009**

(151) **29.01.2010**

(181) **22.04.2019**

(730) Զուլայբոմ Ինքորփորեյթիդ, US

(310) 77/600,347 (320) 24.10.2008 (330) US

(540)

QUALCOMM

(511) (510)

դաս 9. համակարգչային ծրագրեր և ծրագրային արտադրանք կապի սարքավորումների համար. համակարգչային ծրագրային արտադրանք և ծրագրեր, որոնք ապահովում են կապի սարքավորումներից օգտվողների միաժամանակյա մուտքը տվյալների բազաներ և գլոբալ համակարգչային ցանցեր. համակարգչային ծրագրային արտադրանք, որը ապահովում է տվյալների փոխանցում կապի շարժական սարքերի միջև. միկրոէլեկտրամեխանիկական ցուցչային վահաններ. համակարգչային խաղերի ծրագրային արտադրանք կապի սարքավորումների համար. համակարգչային խաղերի ծրագրային արտադրանք և ծրագրեր, որոնք թույլ են տալիս օգտվողներին բջջային հեռախոսներով խաղեր խաղալ. կապի շարժական տերմինալներ, այդ թվում՝

կապի ձայնային սարքավորումներ և տվյալների փոխանցման կապի սարքավորումներ, որոնք օգտագործվում են ցամաքային կամ արբանյակային կապի համակարգերում. ապարատային սարքեր՝ հեռահաղորդակցության ապահովման և տվյալների փոխանցման ցանցերի կազմակերպման համար, մասնավորապես՝ բազմաթիվ ցանցային ենթակառուցվածքներով և կապի պրոտոկոլներով ձայնի, տվյալների և տեսաազդանշանների փոխանցման և խմբակցման սարքավորումներ. համակարգչային գործող համակարգեր, այն է՝ գործող համակարգերի ծրագրային արտադրանք և դրանց հետ օգտագործելու համար նախատեսված համակարգչային սպասարկող ծրագրեր. էլեկտրոնային սարքեր, այն է՝ համակարգչային սարքավորումներ գլոբալ համակարգչային ցանցեր և կապի ցանցեր մուտք գործելու համար. նաև դրանց հետ օգտագործման համար նախատեսված գործող համակարգերի ծրագրային արտադրանքի ծրագրեր և համակարգչային ցանցեր, կապի ցանցեր և գործույթային համակարգերի ծրագրային արտադրանքի ծրագրեր և համակարգչային սպասարկող ծրագրեր:

(740) 2. Մանուկյան

(210) **20090629** (111) **14941**
 (220) **08.06.2009** (151) **29.01.2010**
 (181) **08.06.2019**
 (730) Յուրոդրագ Լաբորատորիզ Բ. Վ. , NL
 (540)

náidəł

(511) (510)
 դաս 5. դեղագործական պատրաստուկներ, մասնավորապես՝ ոչ ստերոիդ հակաբորբոքային միջոց (NSAID):
 (740) Ա. Գալոյան

(210) **20090649** (111) **14942**
 (220) **10.06.2009** (151) **29.01.2010**
 (181) **10.06.2019**
 (730) «Մուրադ սար» ՍՊԸ, Երևան, Նոր-Նորքի 4-րդ զանգված, Թևոսյան 7, AM

(540)



(591) Նշանը պահպանվում է կարմիր, արծաթագույն, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)
 դաս 6. մետաղական շինանյութ. փոխադրովի մետաղական կառուցատարրեր ու կառուցվածքներ, մասնավորապես՝ մետաղական դռներ, դռան մետաղական լրակազմեր, դռան սողնակներ, սիգեր, դռան զանգեր, ոչ էլեկտրական զանգակներ, դռան մետաղական շրջանակներ, դռան զսպանակներ, դռան մետաղական հենակներ, սահմանափակիչներ, դռան մետաղական լողաթներ, մետաղական լուսամուտներ, փեղկավոր լուսամուտներ, լուսամուտի մետաղական օդանցքներ, լուսամուտի մետաղական լրակազմեր, լուսամուտի հողվակներ, անվակներ, բլոկեր, լուսամուտի հենակներ, սահմանափակիչներ.

դաս 19. ոչ մետաղական շինանյութ, մասնավորապես՝ լուսամուտներ փայլատ կամ ներկված ապակուց, ոչ մետաղական լուսամուտներ, ոչ մետաղական փեղկավոր լուսամուտներ, շինարարական լուսամուտային ապակի, լուսամուտի ոչ մետաղական շրջանակներ, լուսամուտի ոչ մետաղական բարավորներ, լուսամուտի ոչ մետաղական փեղկավոր ապակեկալներ, ոչ մետաղական դռներ, ոչ մետաղական փեղկավոր դռներ, դռան ոչ մետաղական ամրաններ, շրջանակներ, դռան կամ լուսամուտի ոչ մետաղական բարավորներ, դռան ոչ մետաղական լողաթներ:
 (740) Ա. Պետրոսյան

(210) **20090744** (111) **14943**
 (220) **01.07.2009** (151) **29.01.2010**
 (181) **01.07.2019**
 (730) Էբոթ Ռեսփիրեթորի LԼԶ , US
 (310) IR 850070 (320) 28.04.2005 (330) US
 (540)

Ниспан

(511) (510)

դաս 5. դեղագործական պատրաստուկներ՝ լիպիդային խանգարումների, սրտանոթային վիճակների, պերիֆերիկ անոթային խանգարումների և կենտրոնական անոթային խանգարումների բուժման համար:

(740) 2. Մանուկյան

(210) 20091031

(111) 14944


(220) 28.08.2009

(151) 29.01.2010

(181) 28.08.2019

(730) «Մետալ ստիլ» ՓԲԸ, Եղեգնաձոր, Անդրանիկի 12/24, AM

(540)



(511) (510)

դաս 6. մետաղական խողովակներ:

(210) 20091032

(111) 14945

(220) 28.08.2009

(151) 29.01.2010

(181) 28.08.2019

(730) Անհատ ձեռնարկատեր Նորիկ Զակոբջանյան, Եղեգնաձոր, Անդրանիկի 12/24, AM

(540)



(511) (510)

դաս 35. առևտուր:

(210) 20091058

(111) 14946

(220) 04.09.2009

(151) 29.01.2010

(181) 04.09.2019

(730) «Կլաստր» ՍՊԸ, Երևան, Բագրատունյանց 39/17, AM

(540)

ԿԼԱՍՏՐ

(511) (510)

դաս 32. ջուր:

(210) 20091289

(111) 14947

(220) 23.10.2009

(151) 29.01.2010

(181) 23.10.2019

(730) Մերք ընդ Քո., Ինք., Նյու Ջերսիի Նահանգ, US

(540)

CO-RENITEC

(511) (510)

դաս 5. դեղագործական պատրաստուկներ սրտանոթային հիվանդությունների և խանգարումների բուժման համար:

(740) 2. Մանուկյան

(210) 20090014

(111) 14948


(220) 14.01.2009

(151) 03.02.2010

(181) 14.01.2019

(730) «ԱՐՎԻԵՄ Սթայլ» ՍՊԸ, Երևան, Զ.-Ա. Թադ., Բաֆֆու 87, բն. 2, AM

(540)



(591) Նշանը պահպանվում է սև և բաց մոխրագույն գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 16. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կաչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ.

դաս 25. հագուստ, կոշիկեղեն, գլխարկներ.

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն, առևտուր:

(210) **20090258** (111) **14949**
 (220) **10.03.2009** (151) **03.02.2010**
 (181) **10.03.2019**
 (730) «Երեսուներկու փրոդաքշև» ՍՊԸ, Երևան,
 Ն.Չարյան 22, AM
 (540)



(591) Նշանը պահպանվում է մոխրագույն, նարնջագույն և սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)
 դաս 16. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պի-

տույքներ. կաչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ.

դաս 25. հագուստ, կոշիկեղեն, գլխարկներ.

դաս 28. խաղեր և խաղալիքներ, մարմնամարզական և սպորտային իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, տոնածառի զարդեր.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. այլուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց.

դաս 32. զարեջուր. հանքային և զազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր.

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ զարեջրի).

դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ. լուցկի.

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ.


դաս 38. հեռահաղորդակցություն.

դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ). ապրանքների փաթեթավորում և պահպանում. ճանապարհորդությունների կազմակերպում.

դաս 41. դաստիարակություն (կրթություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում:

(210) **20090297** (111) **14950**
 (220) **17.03.2009** (151) **03.02.2010**
 (181) **17.03.2019**
 (730) «Մուշ-4» Արտադրական կոոպերատիվ
 Երևան, Զիվանի 13/1, AM

(540)



(591) Նշանը պահպանվում է դարչնագույն, մոխրագույն, բեժ, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)
դաս 30. սուրճ, թեյ:

(210) **20090567** (111) **14951**
(220) **19.05.2009** (151) **03.02.2010**
(181) **19.05.2019**

(730) «Մրգանուշ» գինու-կոնյակի գործարան ՍՊԸ, Արարատի մարզ, գյուղ Մրգանուշ, AM
(540)



(526) Բոլոր գրարուններն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է սև, բաց և մուգ կարմիր, դեղին, բաց և մուգ երկնագույն գունային համակցությամբ:

(511) (510)
դաս 30. քացախ.
դաս 33. ալկոհոլային խմիչքներ (քացառությամբ զարեջրի):

(210) **20090654** (111) **14952**
(220) **11.06.2009** (151) **03.02.2010**
(181) **11.06.2019**

(730) «Ինտաս» ՍՊԸ, Երևան, Կիևյան 1-ին նրբ., 3-րդ շենք, բն. 12, AM

(540)

BLACKBERRY

(511) (510)
դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:

(210) **20090757** (111) **14953**
(220) **06.07.2009** (151) **03.02.2010**
(181) **06.07.2019**

(730) «Ալ համռա ռիել էսթեյթ» ՍՊԸ, Երևան, Մաշտոցի 43, բն. 4, AM

(540)

AL HAMRA REAL ESTATE ARMENIA

(526) “ARMENIA” անվանումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511) (510)
դաս 37. շինարարություն, նորոգում, սարքավորումների տեղակայում:

(210) **20090769** (111) **14954**
